ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվար, 2026

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2026թ.-ի Հունվարի 31-ի դրությամբ կազմել են 262.84 մլրդ դրամ՝ 2025թ.-ի Հունվարի նկատմամբ աճելով 17.8%-ով, իսկ 2025թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 1.4%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2026թ.-ի Հունվարի 31-ի դրությամբ կազմել է 204.97 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Հունվարի նկատմամբ աճելով 19.5%-ով, իսկ 2025թ. Դեկտեմբերի նկատմամբ՝ 1.0% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ կազմել է 90.93 մլրդ դրամ՝ 2025թ.-ի Հունվարի նկատմամբ աճելով 11.8%-ով, իսկ 2025թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 5.0%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2025-2026թթ. Հունվարի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2026թ.-ի Հունվար ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 17.68 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 63.5%-ով, իսկ 2025թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ նվազել է 20.2%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025 և 2026 թթ.-երի Հունվար ամսին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2026թ.-ի Հունվար ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 67,074 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.4%-ով, իսկ 2025թ.-ի Հունվարի նկատմամբ աճել է 19.6%-ով (Գծ. 3):

- 2026թ.-ի Հունվար ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 225,372 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2025թ.-ի Հունվարի նկատմամբ աճել է 8.2%-ով, իսկ 2025թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 3.0%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2026թ.-ի Հունվարին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 264 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 909 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2025թ.-ի Հունվարին կազմել են համապատասխանաբար՝ 193 և 823-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025 և 2026 թթ.-երի Հունվար ամսին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2026թ.-ի Հունվարի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 159 մասնաճյուղ, որը, համեմատած 2025թ.-ի Հունվարի հետ, աճել է 4-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2026թ.-ի Հունվարի դրությամբ ունեցել են 456 վարկային մասնագետ, որը, համեմատած 2025թ.-ի Հունվարի հետ, աճել է 42-ով:
- 2026թ.-ի Հունվարին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 38.77 մլն դրամ, նախորդ ամսին՝ 49.37 մլն դրամ, իսկ 2025թ.-ի Հունվարին այս ցուցանիշը կազմել է ևս 26.12 մլն դրամ (Գծ. 5):
- 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 449.50 մլն դրամ, նախորդ ամսվա 452.13 մլն դրամի և 2025թ.-ի Հունվարին 414.23 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ կազմել է 2,699 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,340 մլն դրամ և 2025թ.-ի Հունվարին՝ 1,867 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 44.5%-ով, իսկ 2025թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 101.4%-ով: 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.32%-ը, 2025թ.-ի Հունվարին ևս կազմել է 1.09% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ 3,570 կազմել է մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,411 մլն դրամ և 2025 թ.-ի Հունվարին՝3,252 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 9.8%-ով, իսկ 2025թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 4.7%-ով: 2026թ.-ի

Հունվարի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.74%-ը, 2025թ.-ի Հունվարին՝ 1.90% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 342 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,847 մլն դրամ և 2025թ.-ի Հունվարին՝147 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2026թ.-ի Հունվարին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 81.5%-ով, իսկ 2025թ.-ի Հունվարի նկատմամբ աճել է 132.3%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Հունվարի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.17%-ը, նախորդ ամիս՝ 0.91% և 2025թ.-ի Հունվարին 0.09% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Հունվարի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2026թ.-ի Հունվարի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 78.0%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2025թ.-ի Հունվարին կազմել է 76.9% (Գծ. 7):

- Սույն թվականի Հունվարի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 44.4%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 44%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2025թ.-ի Հունվարին կազմել է 47.4% (Գծ. 7):
- 2026թ.-ի Հունվարի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 34.6%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2025թ.-ի Հունվարին կազմել է 36.4% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2026թ.-ի Հունվար ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.89, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.9 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Հունվարի համար կազմել է 1.74:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
56,101
58,587
66,270
63,043
63,633
60,686
58,074
54,881
55,741
60,283
61,106
67,326
67,074
Jan-25
Feb-25
Mar-25
Apr-25
May-25
Jun-25
Jul-25
Aug-25
Sep-25
Oct-25
Nov-25
Dec-25
Jan-26


Ժամկետանց վարկերի դինամիկան 01/2025-01/2026
PAR 1-30 days
PAR more than 30 days
5,000,000
4,000,000
3,000,000
2,000,000
1,000,000
-
Jan-25
Feb-25
Mar-25
Apr-25
May-25
Jun-25
Jul-25
Aug-25
Sep-25
Oct-25
Nov-25
Dec-25
Jan-26